«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| | |
|---|---|
| ԹԵՄԱ | Հարցադրումների մեթոդով բանավոր խոսքի զարգացումը 1-ին դասարանում |
| ԱՌԱՐԿԱ | Այբբենարան |
| ՀԵՂԻՆԱԿ | Ստեփանյան Անուշ |
| ՄԱՐԶ | Սյունիք |
| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ | Սիսիանի հ 2 հիմնական |

# Բովանդակություն

Ներածություն ..... 4
Գրական ակնարկ ..... 5
Փաստերի և բացահայտումների վերլուծություն ..... 8
Փորձարարական դաս 1 ..... 9
Փորձարարական դաս 2 ..... 10
Փորձարարական դաս 3 ..... 12
Դասերի վերլուծություն ..... 14
Եզրակացություն ..... 16
Արդյունքների վերլուծություն ..... 17
Գրականություն ..... 18

## *Հարցադրումների մեթոդով բանավոր խոսքի զարգացումը 1-ին դասարանում*

Մեթոդը միաժամանակ նախադրյալ է և նյութ, գործիք և ուսումնասիրության արդյունք:

**Լ.Վիգոտսկի**

# Ներածություն

Մայրենի լեզվի ուսուցումը տարրական դասարաններում կարևոր նշանակություն ունի երեխայի կրթության և դաստիարակության գործընթացում:

Մայրենի լեզվի հիմնական խնդիրներից է երեխայի բանավոր խոսքի զարգացումը, որի կարևոր բաղադրիչներից մեկը բառապաշարն է: Իսկ առանց դրա չի կարող լինել հարուստ, գեղեցիկ պատկերավոր խոսք: Լեզուն պահպանելու համար առաջին հերթին այն պետք է սիրել և ճիշտ գործածել: Երեխան մայրենի լեզվի կրողն է: Նա անընդհատ հաղորդակցվում է, արտահայտում իր մտքերը; Կրտսեր դպրոցի խնդիրն է՝ օգնել երեխային ճիշտ կազմակերպելու բանավոր և գրավոր խոսքը, կարողանալ արտահայտել իր հույզերը, զգացմունքները և հաղորդակցվել:

Պետք է ստեղծել ազատ անկաշկանդ միջավայր՝ սեփական մտքերն արտահայտելու համար: Նպաստել, որ սովորողն առանց սխալվելու վախի արտահայտի իր մտքերը, կարծիքներն ու հույզերը;

Արդյունավետ հարցադրումներով դասը կառավարող ուսուցիչը կապահովի դասի՝ իր ցանկացած ընթացքն ու ուղղությունը: Այդ կերպ աշակերտներն առավել խորությամբ կընկալեն ուսումնական ծրագրով նախատեսված նյութերը, և կարճաժամկետ հիշողության մեջ տպավորված տեղեկույթը կփոխակերպվի երկարաժամկետ ընկալմամբ, ըմբռնումով «թրծված» գիտելիքի և իրական կյանքում այն կիրառելու հնարավորության:

Ինչպիսի խնդիրներ են առաջանում առաջին դասարանում բանավոր խոսքի զարգացման գործընթացում.

- ✓ Աղքատ բառապաշարի առկայություն
- ✓ Կապակցված խոսք կառուցելու դժվարություն
- ✓ Սեփական մտքերը ճիշտ ձևակերպելու կարողության բացակայություն
- ✓ Ընկերների հետ հաղորդակցվելու հմտության բացակայություն

# Գրական ակնարկ

Դասը որպես ուսումնական աշխատանքի կազմակերպման հիմնական ձև, բաղկացած է մեթոդական տարբեր հնարների և միջոցների խելացի ու նպատակահարմար համադրումից: Դասի կարևոր բաղադրամասերից մեկն էլ հարցն է: Տարրական դաարաններում անհնար է որևէ դաս կառուցել առանց հարցադրումների: Ուսուցիչն այդ միջոցին դիմում է դասն աշխուժացնելու, աշակերտներին ակտիվացնելու, նրանց ինքնուրույն գործունեության մղելու նպատակով: Հարցադրմամբ ուսուցիչն ստեղծում է դասի կառուցման տրամաբանական հենակետեր, տվյալ խնդրի ուղղությամբ սևեռում է երեխայի ուշադրությունը, դրդում նրանց մտածել, խորհել, համեմատել, եզրահանգություններ անել: Հոդվածի հեղինակի ներկայացմամբ՝ ուսումնական նյութը դյուրըմբռնելի և արդյունավետ ներկայացնելուց բացի, ուսուցիչը պետք է կարողանա կազմել համակողմանիորեն ընգրկուն հարցաշարեր, որոնք աշակերտներին կօգնեն խորացնել նյութի բովանդակության ընկալումը և հնարավորություն կտան կիրառել այն:

Աշակերտներին քննադատական կամ ստեղծագործական մտածողության մղելու համար հարկավոր է նրանց առաջադրել այնպիսի հարցեր, որոնք ենթադրում են բազմազան ու տարբեր պատասխաններ և ապահովում ճանաչողական առավել բարձր մակարդակ: Ուսուցչի կողմից իրականացվող հարցադրման մեթոդը հետազոտման, դիտարկման ամենադյուրին ձևն է: Ուսուցիչը պետք ընտրի առավել արդյունավետ հարցադրումներ, որպեսզի պարզի, թե աշակերտները որ հարցերում են դժվարանում, և ըստ այդմ մշակի ուսուցումը բարելավելու ուղիներ: Հարցերը պետք է ձևակերպել այնպես, որ դրանք նպաստեն աշակերտների իմացական կարողությունների զարգացմանը: Հարցադրումները պետք է լինեն պարզ և բարդ: Ելնելով ուսուցչի հետապնդած նպատակներից՝ կարելի է համատեցել տարբեր մակարդակներ պահանջող հարցերը:

Բլումի տաքսոնոնիան դասակարգում է մտածողության գործընթացը՝ պարզից բարդ սկզբունքով, որով առաջնորդվելիս ուսուցիչները ապահովելով հարցերի տարբեր մակարդակները, կարող են դրանք կառուցել ըստ ստուգման տարբեր տեսակների: Ուսուցչի կողմից առաջադրվող հարցերը կարող են լինել՝

1. Գիտելիքների յուրացումը ստուգող հարցեր, որոնք ճանաչողական ցածր մակարդակ են պահանջում, աշակերտը թվարկում է, սահմանում, նկարագրում (ո՞վ, ե՞րբ, ո՞րտեղ):

2. Ընկալումն ու կիրառման հմտությունը ստուգող հարցերն ապահովում են միջին մակարդակ, աշակերտն ամփոփում է, մեկնաբանում և կիրառում յուրացված գիտելիքը:

Ուսուցչի հարցադրումները պետք է բխեն նպատակներից: Ամբողջ դասարանին ուղղված հարցերը քննարկման մեջ ընգրկում են հնարավորինս շատ աշակերտների: Եթե ուսուցիչն հարցն ուղղում է որևէ աշակերտի, ապա մյուսները նույն պատասխանատվությամբ չեն փորձի գտնել հարցի պատասխանը: Պետք է լսել աշակերտներից շատերի պատասխանները, ապա դասարանի միջոցով հստակեցնել պատասխանը, աշակերտներին տրամադրել հետադարձ կապ, որը կարևոր է աշակերտներին ոգևորելու և նրանց առաջադիմության մասին պատկերացում տալու առումով: Աշխատանքի այսպիսի կազմակերպումը կակտիվացնի սովորոցներին, կբարձրացնի դասի արդյունավետությունը:

Հարց ու պատասխանի ժամանակ ուսուցիչը հնարավորություն է ունենում աշխատել ողջ դասարանի հոտ: Աշակերտները սովորում են ոչ միայն ուսուցչից, այլև միմյանցից: Նրանք դրսևորում են իրենց գիտելիքները, կարողանում են հիմնավորել, թե ինչպես են յուրացրել նոր նյութի բովանդակությունը: Իսկ ուսուցիչը մինչև նոր նյութին անցնելը ստուգում է աշակերտների ընկալման մակարդակը: Հարցերը տրվում են ոչ միայն ըմբռնումը ստուգելու, այլև այն նպատակով, որ աշակերտներին ընգրկեն թեմայի համակողմանի ուսումնասիրության, նյութի բովանդակության ըմբռման գործընթացի մեջ շաղկապեն այդ ամենը նախկինում ձեռք բերած գիտելիքների հետ և ուսումնասիրեն դրանց կիրառման հնարավորությունները: Հարցերն աշակերտներին պետք է մղեն նյութի ակտիվ յուրացմանը: Նյութը վերաձևակերպելով նրանք այն պետք է դարձնեն իրենցը, քննեն դրա իմաստն ու հետևանքները:

Հարցերը ոչ միայն ստուգման միջոց են, այլև ունեն ուսուցողական դեր և տարաբնույթ տեղեկատվություն են հաղորդում աշակերտներին: Անհրաժեշտ է կենտրոնանալ այնպիսի հարցերի վրա, որոնք աշակերտին օգնում են հասնելու կապակցված ընկալումների և ոչ թե ուշադրությունը սևեռելու միայն տվյալ հարցի ճանաչողական մակարդակի վրա: Շատ հաճախ աշակերտի սխալ պատասխանի պատճառը պետք է փնտրել ոչ թե նրա

գիտելիքների պակասի, այլ ուսուցչի առաջադրած հարցի մեջ, որովհետև սխալ, ոչ ճիշտ հարցադրումը թելադրում է նույնպիսի պատասխան, և ընդհակառակը: Շատ կարևոր է առաջադրվող հարցի կապը ուսումնասիրող նյութի, ինչպես նաև մինչ այդ առաջադրված և դրանից հետո առաջադրվելիք հարցի հետ:

Հարցերի մեջ ամենից տրամադրոցը, հանգամանալից ուր պատճառաբանված պատասխան պահանջողը «ինչու՞» հարցն է, որը պետք է հաճախակի հնչեցնել: Կարևոր են նաև «ո՞վ, ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ, ինչպե՞ս» հարցերը, որոնք այլ խնդիրներ ու նպատակներ ունեն: Եթե «ինչո՞ւ» հարցն աշակերտներին ստիպում է թափանցել ուումնասիրված կամ դիտած իրերի և երևույթների էության մեջ, պարզ դատողություններ անել, պատճառաբանել ու հիմնավորել դրանք, ապա մյուս հարցերը պահանջում են ուսումնասիրած առարկաների և երևույթների նկարագրություն, պատրաստի ձևով յուրացրած փաստերի և հատկանիշների թվարկում, նպաստում են դիտողականության, ուշադրության ու հիշողության զարգացմանը: Սակայն դրանք «ինչո՞ւ» հարցին փոխարինել չեն կարող: Այս երկու տիպի հարցերը պետք է օգտագործել համատեղ ու զուգակցված: Դրանք աշակերտներին ստիպում են պատասխանելուց առաջ ոչ միայն գտնել առաջին հակիրճ ու ճիշտ պատասխանը:

Մեր աշակերտներին ուղղորդելով ճիշտ հարցադրումներ կատարելու և առաջադրված հարցերին պատասխաններ փնտրել-գտնելու հմտությունների յուրացմանըէ մենք սատար կլինենք նրանց՝ կառուցելու կյանքի համառ անհրաժեշտ գիտելիքներիբովանդակային առանցքը: Խոսքում օտար բառերի առկայություն

- ✓ Ժեստի, միմիկայի ոչ ճիշտ դրսևորում
- ✓ Հույզերն ու ապրումներն արտահայտելու դժվարություն
- ✓ Սովորողի կաշկանդվածություն
- ✓ Ամաչում է ընկերներից, ուսուցչից
- ✓ Արձագանքում է ցածրաձայն
- ✓ Տալիս պատասխան մեկ բառով
- ✓ Համարձակության բացակայություն
- ✓ Անվստահություն սեփական անձի նկատմամբ

Այդ է պատճառը, որ որոշեցի իրականացնել հետազոտություն այս թեմայով, և որոշեցի փորձարկել ուսումնական պրոցեսում

## Փաստերի և բացահայտումների վերլուծություն

Առաջին դասարանում բանավոր խոսքը շատ աղքատ է: Միտքը արտահայտում են կցկտուր, համառոտ: Խոսում են ոչ գրական հայերենով, վախվորած են, մտքերն արտահայտում են կաշկանդված, ուշադրությունը կենտրոնացած չէ, լսելու կուլտուրայի բացակայություն, մենախոսական խոսքի բացակայություն, բացակայում է բարեկիրթ խոսքի հնչերագը:

Ընտրել եմ այս թեման՝ *« Հարցադրումների մեթոդով բանավոր խոսքի զարգացումը»,* որովհետև ճիշտ հարցադրումներով կարող եմ զարգացնել և խթանել սովորողների բանավոր խոսքը: Հարցադրումների մեթոդով կարող եմ լուծել այս խնդիրները:

- տարբերակել բարեկիրթ խոսքի հնչերանգը
- իմանալ բարեկիրթ բառեր
- կարողանալ կիրառել տարբեր իրավիճակներին համապատասխան

Հետազոտական աշխատանքը անց եմ կացրել Սիսիանի հ. 2 հիմնական դպրոցի 1-ին «ա» դասարանում: Աշխատանքներս իրականացնելուց առաջ կազմել եմ դասի պլաններ, որոնք հագեցած են եղել անհրաժեշտ պարագաներով՝ նկարներ, քարտեր, պաստառներ:

Որպեսզի հասնեմ իմ նպատակին օգտագործել եմ հարցադրումների մեթոդը :

# Փորձարարական դաս 1

**Այբբենարան 1-ին դասարան**

**Դասի թեման** - Սեպտեմբերի 1

**Դասի նպատակը**-Բացահայտել սովորողների հացորդակցական կարողությունները

**Ակնկալվող արդյունքները**- սովորողը կկարողանա տեսածը արտահայտել բառերի միջոցով

**Անհրաժեշտ պարագաներ** – մեծադիր նկար , քարտեր

**Կիրառվող մեթոդական հնար**- հարցադրումների մեթոդ

**Դասի ընթացք -Խթանում**

- ✓ Ի՞նչ եք տեսնում նկարում
- ✓ Ովքե՞ր են նկարում
- ✓ Որտե՞ղ են նրանք
- ✓ Ինչո՞ւ են եկել դպրոց
- ✓ Տարվա ո՞ր եղանակն է, և որ ամիսը
- ✓ Ինչո՞ւ է կոչվում «Գիտելիքի օր»
- ✓ Ինչպիսի՞ն է նրանց տրամադրությունը
- ✓ Ինչպիսի՞ ծաղիկներ կան

Իմաստի **ընկալում** – աշխատանք դասագրքով, կապակցված խոսքի ընկալում

Պատմել նկարը

«Սեպտեմբերի մեկն է: Բոլոր աշակերտները շտապում են դպրոց: Նրանց ուղեկցում են ծնողները: Աշակերտները քնքշաբույր ծաղիկներ են վերցրել, որ նվիրեն իրենց առաջին ուսուցչուհուն: Դպրոցի բակում նրանց դիմավորում է առաջին ուսուցչուհին; Բոլորը նշում են «Գիտելիքի օրը»;

Տալ պատմության մասին գաղափար

**Կշռադատում**- սովորողը կարողանա պատմել իր մասին

# Փորձարարական դաս 2

**Դասի թեման** – Հաստ, բարակ

**Դասի նպատակը**- Ծանոթանալ առարկաների հատկություններին ( մեծ, փոքր, երկար կարճ,ծանր, թեթև հատ , բարակ)

**Ակնկալվող արդյունքներ**- Կարողանան ստեղծել կապակցված խոսք

**Անհրաժեշտ պարագաներ**- Նկարներ , քարտեր

**Կիրառվող մեթոդական հնար**- Հարցադրումների մեթոդ

**Դասի ընքացքը**

**Խթանում – Ի՞նչ եք տեսնում նկարում**

- ✓ Որտե՞ղ են վայրի կենդանիները
- ✓ Ի՞նչ են անում
- ✓ Ի՞նչ են խոսում արջն ու աղվեսը
- ✓ Գուշակեք, ինչի մասին են խոսում
- ✓ Ի՞նչ գիրք է վերցրել արջը (հաստ, կարմիր)
- ✓ Ի՞նչ գիրք է վերցրել աղվեսը (բարակ, կապույտ)
- ✓ Ինչի՞ համար է գիրքը
- ✓ Ի՞նչ խորհուրդ է տալիս արջը (գուշակել)
- ✓ Ինչ է պատասխանում աղվեը
- ✓ Ինչու են ուշադիր լսում մյուս կենդանիները
- ✓ Էլ ի՞նչ հաստ առարկաներ եք տեսնում
- ✓ Էլ ի՞նչ բարակ առարկաներ կան

**Ֆիզկուլտ դադար**

Խաղ՝ «Հաստ, բարակ»

**Իմաստի ընկալում** -Ուսուցչի օգնությամբ ստեղծեցին պատմություն:

«Ամառ է: Անտառում արջուկն ու աղվեսը նստել են ծառի տակ ու զրուցում են:Արջուկը վերցրել է հաստ գիրք, իսկ աղվեսը՝ բարակ: Արջը նստել է հաստ գերանի վրա , աղվեսը՝ բարակ: Արջը  խորհուրդ է տալիս, որ աղվեսը շատ գիրք կարդա: Բոլոր կենդանիները լսում են նրաց զրույցը»:

Սա պատմություն է:

Աշխատանք դասագրքով

**Կշռադատում –** քարտերի միջոցով խմբավորել հաստ և բարակ առարկաները:

# Փորձարարական դաս 3

**Դասի թեման** – Վերև, ներքև

**Դասի նպատակը**

- Ծանոթացնել վերև , ներքև հասկացություններին
- Սովերեցնել ինչպես կողմնորոշվել շրջապատում
- Սովորեցնել մտքերը ազատ, անկաշկանդ արտահայտել

**Ակնկալվող արդյունքները**- Սովորողները կարողանան մտքերը արտահայտել գեղեցիկ նախադասություններով

**Անհրաժեշտ պարագաներ** – մեծադիր նկար, քարտեր

**Կիրառվող մեթոդական հնար**- հարցադրումների մեթոդ

**Դասի ընթացքը**

**Խթանում –** Հարցերի միջոցով պարզել, թե Ինչ են տեսնում նկարում

- ✓ Տարվա ո՞ր եղանակն է
- ✓ Որտե՞ղ են թռչունները և կենդանիները
- ✓ Ո՞րն է վերևում
- ✓ Ո՞րն է ներքևում
- ✓ Ի՞նչու է ագռավը նստել ներքևում
- ✓ Ի՞նչ են զրույցում
- ✓ Ինչ եք կարծում, ի՞նչ է ասում աղվեսը
- ✓ Ի՞նչ եք կարծում՝ հետո ինչ կլինի
- ✓ Ներքևում էլ ինչե՞ր կան

**Իմաստի ընկալում**

Սովորում են պատմել նկար- պատմությունը

«Շոգ ամառ էր:Ագռավը անտառում մի կտոր պանիր գտավ ու բարձրացավ ծառի ճյուղին , որ ուտի: Աղվեսը կանգնել ու համոզում էր ագռավին, երգի: Միամիտ ագռավը երգեց, պանիրը ընկավ ներքև: Խորամանկ ագռավը խլեց պաիրը ու փախավ»:

Սա պատմություն է:

Երկրորդ և երրորդ նկարում աշակերտները ինքնուրույն գտնում են վերևի առարկաները, ներքևի առարկաները:

Հերթով նշում են ծաղիկների անունները և ասում ընդհանուր անվանումը:

Հերթով նշում են մրգերի անվանումները և ասում ընդհանուր անվանումը:

**Կշռադատում - Աշխատանք զույգերով**

Բաժանեցի նկար- քարտեր: Աշակերտները առանձնացրին ծաղիկները և մրգերը: Յուրաքանչյուր աշակերտ նշում էր թե ո՞ր միրգն է և ո՞ր ծաղիկը և կազմում էր բառակապակցություն:

# Դասերի վերլուծություն

## *Դաս 1*

Դասի ընթացում բացահայտեցի սովորոցների կարողությունները: հասկացա, որ պետք է ստեղծել բարենպաստ պայմաններ՝

- ✓ Ձևավորել աշխատանքային նախնական հմտություն
- ✓ Հասկացա, որ սովորողը պետք է հաղորդակցվի գրական հայերենով
- ✓ Բացահայտեցի, որ շատ աշակերտներ կաշկանդվում են,ինքնավստահությունը բացակայում է
- ✓ Խոսքում օգտագործում են ժարգոնային բառեր
- ✓ Բացահայտեցի որ երեք աշակերտ չկարողացան մտքերն արտահայտել (Արամ, Ռուբիկ, Սամվել)

Դասը ունեցավ բացասական կողմեր

- ✓ Չկարողացա երեք աշակերտի ընդգրկել դասապրոցեսում, ոչ մի միտք չարտահայտեցին
- ✓ Տասը սովորող պատասխանում էին ցածրաձայն, անվստահ;

## *Դաս 2*

Հետևողական աշխատանքի միջոցով կարողացա դասին ընդգրկել 80% –ին:

- ✓ Սովորողները պատասխանում են ավելի վստահ, քան առաջին դասին
- ✓ Սամվելը սկսեց մասնակցել դասին, տալ պատասխաներ:

Դասը ունեցավ բացասական կողմեր

Ոչ բոլոր աշակերտները կարողացան կապակցված խոսք ստեղծել, շատերի մոտ բանավոր խոսքը զարգացած չէ: Արամն ու Ռուբիկը չեն մասնակցում դասին , հիմնականում լուռ են:

# *Դաս 3*

Օրեցօր աշակերտները դառնում են ավելի վստահ, բառապաշարը հարստանում է, օգտագործում են ուսուցչի կողմից օգտագործվող բառակապակցությունները;

- ✓ Ավելի ակտիվ են
- ✓ Հարցադրումների մեթոդը նպաստում է բանավոր խոսքի զարգացմանը

Դասի բացասական կողմերը:

Կան աշակերտներ , որոնք շշուկով են պատասխանում, համառոտ, անվստահ, Արամը Ռուբիկը շատ պասիվ են:

# Եզրակացություն

Նախաայբբենական շրջանում դասերը վարելիս կիրառեցի հարցադրումների մեթոդը: Քանի որ առաջին դասարանի նախաայբբենական շրջանումիմնականում անցնում ենք նկար պատմություններ, սովորողները պետք է կարողանան վերարտադրել նկարը, կազմել նախադասություններ և հորինեն պատմություն, այդ պատճառով նպատակահարմար գտա կիրառել այս մեթոդը:

Հարցադրումների մեթոդը օգնեց հասնել իմ նպատակին, ունենալ արդյունավետ դաս; Հարցերը կապված նկարի բովանդակության հետ, այնպես էի ձևակերպում , որ խթանում էի սովորողների հետաքրքրությունը: Ստեղծում էի առողջ միջավայր՝ սեփական մտքերն անկաշկանդ արտահայտելու համար: Նպաստում էի, որ սովորողն առանց սխալվելու վախի արտահայտի իր մտքերը:

Հարցադրումները պարզ էին, մատչելի: Սկզբում հնարավորություն էի տալիս արտահայտել մտքերը համառոտ: Կամաց- կամաց հետևողական աշխատանքի միջոցով հասա նրան, որ  սովորողները պատմում էին, իրենց բառապաշարում օգտագործելով նոր սովորած բառերն ու բառակապակցությունները:

Հարցադրումների մեթոդը խթան հանդիսացավ սովորողների ակտիվությանը, յուրաքանչյուր սովորող ձգտում էր պատասխանել հարցերին, մասնակցել դասապրոցեսին:

Նկարի բովանդակությունը ճիշտ վերարտադրելը, վկայում է, որ հարցադրումների մեթոդով հասա իմ նպատակին:

**Արդյունավետ հարցադրումներով դասը նպաստեց սովորողի բանավոր խոսքի զարգացմանը, ինչը և կօգտագործեմ բոլոր դասերին:**

# Արդյունքների վերլուծություն



# Գրականություն


1. *Նախաշավիղ- N 3 2013 թ. էջ 16*

2. *Նախաշավիղ- N 4 2010 թ. էջ 27*

3. *Ուսուցման ժամանակակից մեթոդներ էջ 3 2008թ.*

4. *Նախաշավիղ – N 3 2018 թ. էջ19.20.21*